



Doi: 10.56737/2953-7843-2025.07-29

ԹԱՄԱՐԱ ՄԻՆԱՍՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, ՄՄ

ՍՈՒԼԹԱՆԻԱՅԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ¹

Իրանահայ գաղթավայրերի գրչության կենտրոնների շարքում իր ուրույն տեղն ունի Սուլթանիայի գրչության կենտրոնը, որի վերաբերյալ ամենավաղ հիշատակությունը 1326 թվականից է։ Այս թվականին՝ Հուլավյան Աբու-Սալիդ խանի (1305–1335) եւ Հայոց Լեւոն Դ. թագավորի (1310–1341) տիրապետության ժամանակաշրջանում, Սբ. Աստվածածին եկեղեցում Կարապետ գրիչը Անիից Սուլթանիա գաղթած Գրիգոր քահանայի պատվերով արտագրում է ԺԲ. դարի հայ նշանավոր աստվածաբան եւ եկեղեցական գործիչ Իգնատիոս Սեւեռնեցու (մոտ 1090–1160)՝ Հայոց կաթողիկոս Գրիգոր Պահլավունու խնդրանքով օրինակած Ղուկասի Ավետարանի մեկնությունը։ Ձեռագրի հիշատակարանում նշվում է. «Գրեցաւ սա հրամանաւ եւ արդեամբք նորին, ի ՉՀԵ. (1326) թուականութեանս Հայոց ձեռամբ Կարապետի նուաստ եւ անարհեստ գրչի, ի նորաշէն եւ յարքայանիստ քաղաքիս Սուլթանիայ, ի թագաւորութեանն նետողաց ազգին Բուսայիդ սուլտանին եւ ի Հայոց թագաւորութեան Լեւոնի եւ ի յաջորդութիւն սուրբ Լուսաւորչին Կոստանդեայ եւ ի յառաջնորդութիւն Սարգիսի քորեպիսկոպոսի, ընդ հովանեաւ Սրբուհոյ Աստուածածնիս» (Երուսաղէմ, ձեռ. 453, թ. 494բ)²։ Սակայն փաստերը վկայում են, որ հայերը Սուլթանիայում հաստատվել էին ավելի վաղ. մասնավորապես 1318 թվականին այստեղ գործող եկեղեցուն ձեռագիր է նվիրաբերվել, ինչը խոսում է հա-

^{1*} Ստացվել է՝ 4.04.2025, գրախոսվել է՝ 5.05.2025: էլ. հասցե՝ minasyan.tamara64@mail.ru:

² Ն. ՊՈՂԱՐԵԱՆ. Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հտ. 2, Երուսաղէմ, 1967, էջ 420–421:

մայնքի կազմակերպվածության, կրոնական կյանքի եւ մշակութային աշխուժության մասին³:

Հիշատակարանում իբրեւ նորաշեն եւ արքայանիստ քաղաք հիշատակվող Սուլթանիան, որ ԺԳ. դարավերջին հիմնադրել է Հուլավյան իլխան Արղուն խանը (1284–1291), ԺԴ. դարասկզբին վերակառուցվել է Օլջայթու խուդաբանդա խանի նախաձեռնությամբ (1304–1316) եւ շատ կարճ ժամանակում հռչակվել որպես Հուլավյանների մայրաքաղաք: Մայրաքաղաքային կարգավիճակը նպաստել է Սուլթանիայի քաղաքական, տնտեսական եւ մշակութային վերելքին, ինչի արդյունքում քաղաքը դարձել է նաեւ եպիսկոպոսական կենտրոն: Գտնվելով քարավանային ճանապարհների խաչմերուկում՝ Սուլթանիան դառնում է Առաջավոր Ասիայի առեւտրական հանգույցներից մեկը:

Սուլթանիայի՝ որպես հայ մշակութային եւ գրչության կենտրոնի ձեւավորումը պայմանավորված էր Անի մայրաքաղաքից այստեղ գաղթած անեցիների գործունեությամբ: ԺԴ. դարի առաջին քառորդում քաղաքական եւ տնտեսական անբարենպաստ պայմանների հետեւանքով Անիից տարագրված հայերը Սուլթանիայում հիմնում են կազմակերպված համայնք՝ եկեղեցական կառույցներով եւ մշակութային գործունեությամբ: Նրանք իրենց հետ բերել էին անիական դպրոցի լավագույն ավանդույթները: Համայնքի կրոնական կյանքը կենտրոնացած էր Սբ. Աստվածածին եւ Սբ. Սարգիս եկեղեցիներում, իսկ հոգեւոր առաջնորդն էր Սարգիս քորեպիսկոպոսը: Անեցիների գաղթը ոչ միայն ապահովում է մշակութային շարունակականություն, այլեւ նպաստում է Սուլթանիայի գրչության կենտրոնի ձեւավորմանը:

Կարապետ գրիչը, անդրադառնալով Գրիգոր քահանայի՝ Անիից Սուլթանիա գաղթելու փաստին, գրում է. «Արդ, այսմ լուսազարդ եւ հոգիա-

³ Այդ կապակցությամբ 1318 թվականի հիշատակարանում գրիչը հետեւյալն է գրում. «Ի թուականիս Հայոց ԶԿԷ. (1318), ես՝ ըՍտեփանոս վարդապետս ի Տարանոյ, շնորհեցի Ճաշոց գիրք մի ի Սուլթանիայ քաղաքին աւաքիրիցոյն ըմստակէս սրբասէր եւ պատուելի քահանային...»: Հիշատակարանում, այնուհետեւ, ընդգծվում է Սուլթանիայի դերը՝ «...Սուլթանիոյ մեծայհուշակ եւ արքայանիստ տեղոյն, որ յառաջն ինխրուլան կոչէր, զոր շինեաց եւ մեծացոյց եւ փառաւոր արար զանազան գեղեցիկ շինուածովք մեծ արքայն եւ տէրն տիեզերաց, հզաւր խանն՝ իտապանդայն: Եւ ի սորա յաւուրս էր տէր ըմստակէսն այն՝ պատուեալն ի իտապանդայէն, եւ ի կաթողիկոսէն՝ յաթողակալէն Սրբոյն Գրիգորի տէր Կոստանդեայ, որոյ տունալ էր իշխանութիւն եւ տէրութիւն Սաւթանիոյ ամենայն նահանգին, որ եւ մահ սորայ մեծ սուլ՝ եղեւ ազգիս Հայոց» (տե՛ս Հայերէն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ. դար, մասն Ա. (1301–1325), կազմողներ՝ Լ. ԽԱՉԻԿՅԱՆ, Ա. ՄԱԹԵՆՈՍՅԱՆ, Ա. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ, Երեւան, 2018, էջ 371):

նորոգ սուրբ պատուիրանիս ցանգացող եղեալ ճշմարիտ եւ հաւատարիմ քահանայն Աստուծոյ՝ Գրիգոր, վասն զի ընթերցասէր գոլով եւ հմուտ Հին եւ Նոր աստուածային կտակարանաց եւ կորովի ի բանս իմաստութեան, որով աստուածային զօրութեամբն յաղթահարէր ի դարձուած բանից զդասս ալյասեռից: Եւ ունէր սա զբնակութիւն իւր ի մեծ մայրաքաղաքին Անի: Արդ, վասն աւերման աշխարհին իւրեանց եւ առաւել վասն մայրաքաղաքին Անուոյ, եկեալ բնակէր ի տեղիս յայս»⁴: Գրիգորը քահանայական ընտանիքից էր⁵: Զեռագրում հիշատակվում են նրա ընտանիքի բոլոր անդամները՝ հայրը՝ Եփրեմ քահանան, մայրը՝ Ավագտիկինը, եղբայրը՝ Սարգիս քահանան, նրա կինը՝ Տիկնացը, Գրիգորի հանգուցյալ որդին՝ Մխիթարը եւ կրտսեր որդին՝ Պարոնը: Կարապետ գրիչը հիշատակում է նաեւ Սուլթանիայի առաջնորդ քորեպիսկոպոս տեր Սարգսին, միաբաններին եւ երախտավոր Մխիթար Անեցի գրչին, ինչպես նաեւ իր ծնողներին՝ Սարգիս քահանային եւ Ավագտիկինին:

Սուլթանիայում Կարապետ գրիչի ընդօրինակած ձեռագիր մատյանը հետագայում անցնում է Մարկոս վարդապետին, որի մասին հիշատակվում է որպէս Մինաս Ամդեցու հոգեւոր հայր եւ ուսուցիչ: 1674 թվականին Ուրֆայում Մարկոսը մատյանը նվիրաբերում է մատենագիր եւ գրիչ, հետագայում Երուսաղեմի Հայոց պատրիարք Մինաս Ամդեցուն: Մինասը ձեռագիրը տեղափոխում է Եղեսիա, որտեղ այն նորոգում է Հովհաննես քահանա Եղեսացին՝ լրացնելով պակասող թերթերը: Մինաս Ամդեցին թողել է հիշատակարան՝ խնդրելով հիշել իր ուսուցիչ Մարկոս րաբունապետին եւ իր հորը՝ մահտեսի Առաքելին, որը վախճանվել էր ձեռագիրը ստանալուց մեկ տարի առաջ⁶: Այս հիշատակությունը ոչ միայն փաստում է ձեռագրի շարունակական փոխանցումը, այլեւ վկայում է հոգեւոր կապերի եւ կրթական ժառանգության կարեւորությունը հայ եկեղեցական շրջանակներում:

Երկրորդ եւ վերջին անգամ Կարապետ գրչին հանդիպում ենք 1341 թվականին, երբ նա դարձյալ Գրիգոր քահանայի խնդրանքով

⁴ Ն. ՊՈՂԱՐԵԱՆ. Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հտ. 2, էջ 420:

⁵ ԺԴ. դարում Անիից գաղթած եւ Սուլթանիայում բնակություն հաստատած քահանայական երկու ընտանիքի առավել հայտնի ներկայացուցիչներն էին նշանավոր գրիչ, ծաղկող, կազմարար Մխիթար Անեցին եւ նրա հոգեւոր հայրը՝ Գրիգոր քահանան: Այս մասին տես Կ. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, Անին եւ անեցիները, Երեւան, 2021, էջ 335–338:

⁶ Ն. ՊՈՂԱՐԵԱՆ. Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հտ. 2, էջ 421:

Սուլթանիայում ընդօրինակում է մի Աստվածաշունչ: Հստ հիշատակարանի՝ մատյանը գրվել է «...ի յաշխարհակալութեան Փոքր Շեխ Հասանի, եւ հիւպատոսութեանն եւ սպարապետութեանն Հայոց՝ Բիւրթելին, ի քաղաքն Սուլտանիայ, ի քորեպիսկոպոսութեանն Օրտուի տէր Սարգսի, եւ եպիսկոպոսութեան տէր Գրիգորի» (Վենետիկ, ձեռ. 935, թ. 448ա)⁷: Այս հիշատակությունից երեւում է, որ Կարապետը շուրջ տասնհինգ տարի շարունակել է գրչության գործունեությունը Սուլթանիայում՝ պահպանելով կապը Գրիգոր քահանայի եւ տեղի եկեղեցու հետ:

Ձեռագիր եւ վիմագիր աղբյուրներում «իշխանաց իշխան», «մեծ կոմս եւ կողմնակալ», «մեծ սպարապետ Հայոց եւ Վրաց եւ թագազարմ իշխան», «մեծ ամիր», «յաղթող սպայապետ» հիշատակվող Բուրթել Օրբեկյանը⁸ 1300 թվականին հոր՝ Էլիկումի մահից հետո դարձավ Օրբեկյան իշխանական տան գահերեցը: Նրա ռազմավարական տաղանդը, դիվանագիտական ճկունությունը, ինչպես նաեւ մոնղոլ խաներին նրա հավատարմությունը, ապահովել են բարձր պաշտոններ եւ ազդեցիկ դիրք Իլխանության արքունիքում: 1306–1344 թվականներին նա Սյունիքում եւ նրա սահմաններից դուրս Սյունյաց մեծ իշխան է համարվում: Սմբատ եւ Տարսայիճ Օրբեկյաններից հետո նա ամենահեղինակավոր քաղաքական գործիչն էր: 1307 թվականին Նորավանքում Սյունյաց մետրոպոլիտ Հովհաննես Օրբելի պատվերով Բուրթել իշխանի համար օրինակած Ավետարանի հիշատակարանում Մոմիկը գրում է, որ Բուրթելը այդ թվականին իր գործով Չեսար Օրբեկյանի հետ մասնակցել է Խուդաբանդա խանի՝ դեպի Գիլան կազմակերպած արշավանքներին: Հիշատակարանում նշվում է. «Արդ, եղեւ զրաւ գրչութեանս ի ժամանակին եւ ի թուաբերութիւն 202. 1307 (1307), յորում զան Ղարբանդայն գնաց ի վերայ Թալըշին, Մազանդարոյն Գիլան, եւ զԽուլիւշահ հարին, ընդ նմայ էին Բուրթէլն եւ Չէսարն, որ խաղաղութեամբ դարձան, բայց զաւրացն պակաս մնացին»⁹:

⁷ Հ. Բ. ՍԱՐԳԻՍՅԱՆ, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Ա., Վենետիկ, 1914, էջ 86–96: Տե՛ս նաեւ՝ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ. դար, մասն Ա. (1301–1325), էջ 371:

⁸ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ. դար, մասն Ա. (1301–1325), էջ 107, 285, 457, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ. դար, մասն Բ. (1326–1350), կազմողներ՝ Լ. ԽԱՉԻՎՅԱՆ, Ա. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, Ա. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ, Երեւան, 2020, էջ 299, 302:

⁹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ. դար, մասն Ա. (1301–1325), էջ 134:

Այս արշավանքի մասին հաղորդում են նաեւ վրացական աղբյուրները¹⁰։ Իսկ Կ. Մաթեոսյանը նշում է, որ Մոմիկի հիշատակությունը հայկական միակ աղբյուրն է այդ իրադարձության վերաբերյալ¹¹։ Բուրթելը ոչ միայն ռազմական առաջնորդ էր, այլ նաեւ հոգեւոր-մշակութային հովանավոր։ Չորս տասնյակից ավելի տարիներ լինելով անընդհատ պատերազմների մեջ՝ նա կարողացավ պահպանել Սյունիքի քաղաքական ինքնավարությունը, հատուկ ուշադրություն դարձրեց հոգեւոր-մշակութային կյանքին, կառուցել է եկեղեցիներ, կանգնեցրել խաչքարեր, աջակցել կրթական կենտրոններին, հատկապես՝ Գլաձորի համալսարանին¹²։ Նրա անունով Օրբելյանների նշանավոր ճյուղերից մեկը կոչվեց Բուրթելյան¹³։ 1341 թվականին Բուրթելը նշանակվում է հյուպատոս եւ սպարապետ Իլխանության մայրաքաղաք Սուլթանիայում եւ Թավրիզում։ Այս նշանակումը վկայում է նրա բարձր հեղինակության մասին։ Ղ. Ալիշանը գրում է. «Ի կայսերաց Յունաց ունել նմա զպատիւ կոչմանն» հյուպատոսության¹⁴։

Սուլթանիայում ընդօրինակված ձեռագրի էջերում Կարապետ գրիչը թողել է մի շարք հիշատակարաններ իր եւ Գրիգոր քահանայի անունից։ Իր անձի վերաբերյալ նա օգտագործում է համեստ բնորոշում՝ «զփցուն գրչիկս», իսկ Գրիգոր քահանային ներկայացնում է բացառիկ ակնածանքով որպես «զամենաերջանիկ եւ զճոխացեալն ամենայն իմաստութեամբ գերաշնորհ քահանայն» (Վենետիկ, ձեռ. 935, թ. 2ա), կամ «վեհիմաստ քահանայ Աստուծոյ Գրիգոր, որ եւ ինքն իսկ ունէր զշնորհս վարդապետութեան՝ զօրեղ բանիւ լեզուաց եւ վկայութեամբ Սուրբ գրոց, եւ լիապէս զարդարեալ առաքինութեամբ եւ իմաստութեամբ զմասունս հոգւոյ իւրոյ եւ մարմնոյ» (Վենետիկ, ձեռ. 935, թ. 448ա)։ Այս ձեւակերպումները վկայում են ոչ միայն Գրիգորի հոգեւոր եւ մտավոր բարձր հատկանիշների մասին, այլեւ Կարապետի անձնական հարգանքի եւ նվիրվածության մասին, ինչը բնորոշ է միջնադարյան ձեռագրային մշակույթին։

¹⁰ «Վրաց ժամանակագրություն (1207–1318)», աշխատասիրություն՝ Պ. Մուրադյանի, Երեւան, 1971, էջ 183–184։

¹¹ Կ. Մաթեոսյան, Նորավանքի վիմագրերը եւ հիշատակարանները, Երեւան, 2017, էջ 213։

¹² Գ. Գրիգորյան, Սյունիքը Օրբելյանների օրոք (XIII–XIV դարեր), Երեւան, 1981, էջ 99։

¹³ Լ. Խաչատրյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, Աշխատություններ, հտ. Բ., Երեւան, 2017, էջ 7–38։

¹⁴ Ղ. Ալիշան, Սխական, Վենետիկ, 1893, էջ 95, ծնթ. 3։

Կարապետն անհայտ պատճառով թերի է թողել Հին կտակարանի ընդօրինակումը. այն, ինչպես նաեւ Նոր կտակարանը հետագայում լրացրել են երկու այլ գրիչներ: Մանրանկարիչ Ավագը հավանաբար նույն թվականին էլ կատարել է ձեռագրի ծաղկազարդումը եւ թողել հիշատակարան՝ խնդրելով հիշել իր ծնողներին եւ աշխատանքի մեջ իրեն օգնողներին. «զնկարակերտող սորա զԱւագ դպիր ծնողօք հանդերձ յիշեցէք ի Քրիստոս եւ զայլ աշխատողսն» (Վենետիկ, ձեռ. 935, թ. 2ա): Ավագը համապատասխան էջերում եւ լուսանցքներում նկարազարդել է Հին կտակարանի թեմատիկ պատկերները (Մենդոց, Ելից, Սաղմոսաց եւ Առակաց գրքեր), որոշ գլուխների ճակատազարդերը եւ լուսանցազարդերը՝ զարդարելով դրանք բուսական եւ երկրաչափական պատկերներով, մարդագիր, թռչնագիր եւ կենդանագիր զարդագրերը՝ օգտագործելով կապույտ, կանաչ, վարդագույն, մուգ կարմիր եւ ոսկեգույն երանգներ: Ավագը հասցրել է կատարել նաեւ Նոր կտակարանի չորս Ավետարանների անվանաթերթերի եւ Մարկոս ավետարանչի գծապատկերները¹⁵: Հետագայում ավելացվել են Հին կտակարանի մի քանի ճակատազարդեր եւս, որոնց նկարազարդումն ավարտել է անհայտ եւ ոչ վարպետ մի ծաղկող:

Գրիգոր քահանան պատվիրում եւ ստանում է մատյանը՝ խնդրելով հիշել իրեն «ծնողօք, զարմօք եւ զաւակօք» հանդերձ (Վենետիկ, ձեռ. 935, թ. 2ա), եւ այն նվիրում որդուն՝ Եփրեմ քահանային՝ «ի ժառանգութիւն զաւակի իւրոյ»: Վերջինս էլ ստանալով մատյանը՝ 1354 թվականին ընծայում է Վարագավանքի Սբ. Նշան եկեղեցուն՝ այդ մասին թողնելով հիշատակարան. «Ես՝ նուստ Եփրեմ քահանայ, որ ունէի զգիրքս Աստուածաշունչ ի հօրէ իմմէ՝ Գրիգոր քահանայէ, նուիրեցի եւ ետու զսա ուխտին՝ Վարագայ Սուրբ Նշանին, յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց» (Վենետիկ, ձեռ. 935, թ. 448ա): Մեկ տարի անց՝ 1355 թվականին, Վարագավանքում Մովսէս վարդապետ Մեծոփավանեցին Առակաց գրքից մինչեւ Իմաստություն լրացնում է Սողոմոնի գրքերը եւ թողնում հիշատակագրություն. «Աստուած ողորմի Մովսէս վարդապետին Մեծոփայ վանաց եւ իւր ծնողացն, որ ի ՊԴ. (1355) թվականին զգիրս Առակաց

¹⁵ Այս մատյանի նկարազարդման մասին տե՛ս Լ. ՍԱՐԳՍՅԱՆ, Հին կտակարանի նկարազարդումը ԺԴ դարի հայերեն մի Աստվածաշնչում (Ավագ մանրանկարչի արվեստը), «Բանբեր Մատենադարանի», թ. 28, էջ 296–332:

գրեաց ի Սուրբ ուխտն Վարագ» (Վենետիկ, ձեռ. 935, թ. 538բ)։ Այս նշանավոր վարդապետը Մխիթար Սասնեցու աշակերտն է, որը 1334 թվականին Մեծոփավանքում Մխիթար Սասնեցու համար Գրիգոր աբեղայի օրինակած «Բանք աստուածաբանականի» վերջում գրել է ուսուցչի վարքը եւ իր անունից թողել հիշատակագրություն։ 1362 թվականին նա օրինակում է մի Ավետարան եւ նվիրում Մեծոփավանքին։ Չնայած Թովմա Մեծոփեցու կենսագիրը Մովսես վարդապետին անվանում է «քաջ քարտուղար, ճգնաւոր վարդապետ», այնուամենայնիվ նրանից մեզ չատ քիչ բան է հասել, դրանց մեջ է նաեւ այս մասնակի ընդօրինակությունը¹⁶։

Հետաքրքիր է եղել նաեւ Աստվածաշնչի հետագա ճակատագիրը, որի մասին տեղեկություններ են հաղորդում հետագայի հիշատակարանները։ Այս Աստվածաշնչում Բ. Օրինացի կապակցությամբ պետք է նկատել, որ զարմանալիորեն մի քանի դար բաց է թողնվել ու լրացվել է միայն 1642 թվականին։ Այս թվին Սարգիս անունով գրիչն ընդօրինակում է Երկրորդ Օրինաց գիրքը (Վենետիկ, ձեռ. 935, թ. 98բ-118բ)։ Ըստ 118բ թերթի հիշատակարանի, որը հավանաբար գրել է մատյանը կազմող Մինասը, նույն թվականին Աստվածաշունչը վաճառվում է Տաթևի վանքի միաբաններից Գրիգոր վարդապետին, որը սակայն վախճանվում է՝ չհասցնելով վճարել ձեռագրի համար սահմանված գինը։ Դժվար է ասել՝ ձեռագիրն ինչպես է հասել Տաթև։ Ենթադրել կարելի է միայն, որ կամ Գրիգորն է գնացել Վարագավանք, կամ ձեռագիրն է բերվել Տաթև։ Ձեռագիր վաճառողը, որի ինքնությունը չգիտենք, գալիս է վանք եւ վիճաբանում՝ պահանջելով գումարը։ Վանքի վանահայր Հովհաննես արքեպիսկոպոսը, ձեռագրի համար վճարելով տասնհինգ հազար դահեկան, միաբանների ներկայությամբ լուծում է վեճը։ Ըստ Հ. Բարսեղ վրդ. Սարգիսյանի՝ հավանաբար այս ժամանակ է Հին կտակարանը միացվել Նորին¹⁷։ Քանի որ ձեռագիրն անձամբ չենք տեսել, հետեւում ենք Հ. Բարսեղ վրդ. Սարգիսյանի հաղորդածին։ Մատյանի վերջին ստացողն է Մարգարեն, որն արդար վաստակով ձեռք բերած մատյանը վերստին ընծայել է Վարագավանքին՝ իր, ծնողների եւ արյունակից մյուս հարազատների հիշատակի համար։

¹⁶ Ա. ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, *Մեծոփավանքի գրչության կենտրոնը (ԺԲ–ԺԵ դդ.)*, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1997, էջ 52։

¹⁷ Հ. Բ. ՍԱՐԳԻՍՅԱՆ, *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Ա., էջ 94։*

1337 թվականին Սուլթանիայում¹⁸ Ավագ Ծաղկողը ընդօրինակում է մի Մանրումունք (Բեռլին, ձեռ. 279)¹⁹, որի հիշատակարանում գրչության ժամանակը նշում է Պարսից Մուհամմադ խանի, Լեւոն Դ. Հայոց արքայի եւ Սյունյաց Բուրթելի իշխանության տարիներով՝ վերջինիս անվանելով Հայոց եւ Վրաց սպարապետ. «Գրեցաւ եւ յանգ ելեալ աւարտեցաւ Տետրակս յետ Երգարանիս 929. (1337) Հայկազեանս թուոյ եւ ի Փոքր թուին ՄԾԴ. (254), իսկ յաշխարհակալ զանութեան սուլթան Մահմուտին եւ ի թագաւորութեան Հայոց Լեւոնի Զորորդի եւ ի հայրապետութեան տեառն Յակովբայ եւ յիշխանութեան Տանս Սիսակայ մեծ սպարապետին Հայոց եւ Վրաց պարոն Բիրթէլին եւ զաւակաց իւրոց՝ Պէշքենի եւ Իվանէի, որք յՕրպելեանց եւ ի լուսաւոր վարժապետութեան Մեծին Եսայեայ»²⁰: Մատյանն ընդօրինակվել է Սյունյաց Սարգիս մետրոպոլիտի խնդրանքով. «Արդ, մեծ եւ ամեներջանիկ մետրապոլիտն եւ արհիական զլուխն այսմ նահանգիս՝ տէր Սարգիս, խնդրող լեալ զկնի Երգարանիս նաեւ երաժշտական եղանակաւորացս լինել եւ ի վայելումն անձին իւրոյ սրբազանի, եւ եղբորորդւոյ իւրոյ՝ Յովհաննիսի կուսակրօն քահանայի, որ բազում ժամանակս զեզերի յուսումն աստուածաշունչ Հին եւ Նոր կտակարանաց, եւ արտաքնոցն եւս» (Բեռլին, ձեռ. 279, թ. 135ա): Գլխավոր հիշատակարանում հիշվում են Բուրթելի երկու որդիները՝ Բեշքենն ու Իվանեն, եւ Դլաձորի ուսուցչապետ Եսայի Նչեցին, իսկ ստացողի հիշատակարանում Սարգիս մետրոպոլիտի եղբորորդի Հովհաննես կուսակրոն քահանան: Վերջինս միջնադարյան նշանավոր փիլիսոփա, աստվածաբան Հովհաննես Որոտնեցին է՝ որդին Որոտան գավառի տեր Իվանե իշխանի²¹:

¹⁸ Այս ձեռագրի ստույգ գրչության վայրը հիշատակարանում բացակայում է: Ն. եպս. Պողարյանը եւ Կ. Մուխամբյանը գրչության վայրը համարում են Սուլթանիան՝ նկատի ունենալով, որ Ավագը 1337 թվականից արդեն գործում էր այստեղ: (Ն. ԱՐՔ. ՄՈՎԱԿԱՆ (ՊՈՎԱՐԵԱՆ), Հայ նկարողներ (ԺԱ.—ԺԷ. դար), Երուսաղեմ, 1989, էջ 71: CL. MUTAFIAN, L'Arménie du Levant (XIe–XIVe siècle), T. I, Paris, 2012, p. 711). Լ. Սարգսյանը համակարծիք է վերոհիշյալ տեսակետին (Լ. ՍԱՐԳՍՅԱՆ, «Մանրանկարիչ Ավագը (կյանքը եւ ձեռագրական ժառանգությունը)», ԲՄ 22, 2015, էջ 80–81): Իսկ Ա. եպս. Մկրտչյանը մատյանի գրչության վայրը համարում է Սյունիքը՝ նկատի ունենալով որ ձեռագրի պատվիրատուն Սյունյաց եպիսկոպոսն է: (Ա. ԵՊՍ. ՄԿՐՏՉՅԱՆ, Սյունյաց մետրոպոլիտական աթոռը Օրբելյանների իշխանության ժամանակաշրջանում, Երեւան, 2013, էջ 115):

¹⁹ SĒu N. KARAMIANZ, Verzeichnis der armenischen Handschriften (der Königlichen Bibliothek zu Berlin), Berlin, 1888, p. 27, B. Brentjes, "Armenische Miniaturen in Sammlungen der DDR", The Second International Symposium on Armenian Art, Collection of Reports, v. IV, Yerevan, 1978, էջ 7:

²⁰ «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԴ. դար, մասն Բ. (1326–1350), էջ 277:

²¹ «ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց՝ Լ. ԽԱՉԻԿՅԱՆ, Երեւան, 1950, էջ 497, 520:

Հիշատակարանում Ավագն իրեն բնութագրում է որպես «փծուն եւ անարհեստ», «դանդաղկոտ ձեռամբ եւ մոլոր մտօք» գրիչ. «Եւ՝ Աւագ մեղապարտ, յետին եւ անարհեստ փծուն գրիչ... եւ գրեցի, եւ ծաղկեցի դանդաղկոտ ձեռամբ եւ մոլոր մտօք» (Բեռլին, ձեռ. 279, թ. 135ա): Մատյանի սկզբում Ավագը նկարել է հասակով մեկ կանգնած երկու բարձրաստիճան հոգեւորականների, որոնցից մեկը Ներսես Շնորհալին է՝ վերելում «տէր Ներսէս երգող» գրությամբ²², մյուսը՝ մատյանի ստացող Սարգիս մետրոպոլիտը²³: Ավագը նկարել է նաեւ ճակատազարդերը եւ լուսանցազարդերը²⁴:

1348 թվականին Բուրթել Օրբելյանի մահից հետո Օրբելյանների գահերեց իշխան է դառնում նրա ավագ որդի Բեշքենը, որը շարունակում է հոր ներքին եւ արտաքին քաղաքականությունը: Բեշքենը հմուտ եւ քաջ զինվորական էր: Նա 1337 թվականին Սուլթանիայում եւ Թավրիզում հոր հետ եղել է զինվորական ծառայության մեջ²⁵: Բեշքենի խնդրանքով Ավագ գրիչը բարձրորակ մագաղաթի վրա ընդօրինակում է մի փառահեղ Ավետարան, նկարազարդում հարյուրից ավելի մեծ եւ փոքր մանրանկարներով, կազմում դրոշմազարդ կաշվե կազմով՝ այդ մասին թողնելով հիշատակագրություն. «...փրցփրցուն գրչաւ եւ տարտամ ձեռամբ գրեցի, ոսկեցի ծաղկերանգ եւ կազմեցի» (ՄՄ ձեռ. 212, թ. 310բ)²⁶: Գրիչը գրել է գեղեցիկ, կանոնավոր բոլորգրով, սկզբնատողերը եւ յուրաքանչյուր պարբերության առաջին տառը ոսկեզօծ են, նկարազարդումը կատարված է բարձր վարպետությամբ: Գրչության տեղի մասին գրիչը գրում է, որ Ավետարանն ընդօրինակվել է Ատրպատական աշխարհի Սուլթանիայի Սբ. Աստվածածին եւ Թավրիզի Սբ. Սարգիս եկեղեցիներում Արփա խանի (1335–1336) եւ Բուրթել Մեծի տիրապետության ժամանակ. «Արդ, եղեւ սկիզբն եւ աւարտ տառատպութեան աստուածային մատենիս յաշխարհն Ատրպայկան, յարքայանիստ քաղաքն Սուլտանիա եւ Թավրէժ, ընդ հո-

²² Գ. ՅՈՎԱԷՓԵԱՆ, Մխիթար Անեցի գրիչ եւ նկարիչ (գործածութեամբ Գլաձորի նկարիչ Աւագ դպրի), «Հասկ» հայագիտական տարեգիրք, Ա. տարի, Անթիլիաս–Լիբանան, 1948, էջ 207:

²³ Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիսական, էջ 21:

²⁴ Զեռագրի նկարազարդման մասին մանրամասն տե՛ս Լ. ՍԱՐԳՍՅԱՆ, Բեռլինի պետական գրադարանի հայերեն մանրուսմունքը, «Բանբեր Մատենադարանի», թ. 26, 2018, էջ 121–136:

²⁵ «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԴ. դար, մասն Բ. (1326–1350), էջ 299:

²⁶ Գ. ՅՈՎԱԷՓԵԱՆ, «Մխիթար Անեցի գրիչ եւ մանրանկարիչ (գործակցութեամբ Գլաձորի նկարիչ Աւագ դպրի), էջ 207–208: Լ. ՍԱՐԳՍՅԱՆ, Մանրանկարիչ Ավագը (կյանքը եւ ձեռագրական ժառանգությունը), «Բանբեր Մատենադարանի», թ. 22, Երեւան, 2015, էջ 73–88:

վանեաւ Սրբոյ Մօրն Լուսոյ եւ Սրբոյն Սարգսի զաւրավարի, ձեռամբ անհմաստ եւ անարհեստ փցուն գրչի եւ ոսկէնկար ծաղկի Աւագի, յետին կարօտի բանի, ի թուաբերութեան ամի մարդեղութեան Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի ի Ռ. եւ ԳՃ. եւ Խ. (1340) ամն, եւ ըստ գրոյս թուոյ 229. (1337), ի բռնակալութեան ազգին նետողաց կարճակեցին Արփայի, եւ յիշխանութեան զօրացելոյն Յիսուսի եւ փառաց ի փառս բարձրացելոյն կրկին կենօք եւ աշխարհօք՝ մեծ իշխանաց իշխանին պարոն Բուրթելին՝ հօր վերասացեալ զարդու զաւակին պարոն Պեշգէնին՝ ստացօղի աստուածային գանձուս, եւ ի վերատեսչութիւն եպիսկոպոսութեան տեառն Սարգսի մետրապօլիտի, ի դպրապետութեան մեծ հռետորին Եսայեայ» (ՄՄ ձեռ. 212, թ. 310աբ)։ Ավագը դարձյալ հիշատակում է Սյունյաց Սարգիս մետրոպոլիտին եւ ուսուցչապետ Եսայի Նչեցուն, իսկ Բեշքենը մեծարվում է «գեր քան զբնաւս, յընդրութիւն բարոյն, զեղաղէշ եւ շնորհաշուք յորդիս Սիովնի անդրանիկն եւ Հայոց Մեծաց թագազարմից ժառանկն, տէր տանն Սիսակայ՝ մեծիմաստ պարոնաց պարոն Պեշգէն սնեալ սրբութեամբ, սիրող ղեղեալ սրբազանից կտակարանաց, գիտելով խոհեամ ընդրութեամբ զանոտի կենցաղս անհաստատ բերուն» (ՄՄ ձեռ. 212, թ. 310ա)²⁷։ Հիշատակարանի այս մասում գրիչը հիշում է նաեւ Բեշքենի որդի Էլիկումին՝ «նորաբոյս, ոսկէբողբոջ, աստուածատուր հարազատ ծիրանածին եւ բարենշան զաւակին իւրոյ», «աստուածապատիւ եւ մեծաշուք ծնողաց» Բուրթելին եւ Վախախին, եղբորը՝ «պարծանց սիրալիր հարազատին» Իվանեին եւ իր վաղամեռիկ կնոջը՝ Փաշային, որի հիշատակին էլ Բեշքենը Ավետարանը նվիրում է Տաթեւի վանքին։ Վերջում գրիչը խնդրում է հիշել իրեն եւ իր ծնողներին։

Ավետարանը երկրորդ անգամ կազմվել է 1578 թվականին. Գանձասարի Հովհաննես կաթողիկոսը (1574–1586) իր ծնողների՝ Մեհրաբի եւ Շամումաղի, եղբայրների՝ Բաղդասարի, Զալալի, Մելիքի եւ Դավիթի հոգու համար Ավետարանը կազմել է տալիս Աթանասին²⁸։ Իսկ Ավետարանը ինչպես է հասել Գանձասար, դժվարանում ենք ասել։

²⁷ «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Ժ. Դ. դար, մասն Բ. (1326–1350), էջ 299։

²⁸ Ժ. Զ. դարում Արցախի Զրաբերդ գավառում հայտնի գրիչ, ծաղկող եւ կազմող Աթանասը հիմնականում կատարում էր հոգեւոր առաջնորդների պատվերները։ Այս մատյանը Աթանասի՝ կաթողիկոսից ստացած առաջին պատվերը չէր։ 1576 թվականին նա Հովհաննես կաթողիկոսի խնդրանքով ծաղկազարդել էր Կարապետ գրչի՝ Գանձասարում օրինակած Սաղմոսարանը (ՄՄ ձեռ. 1923)։ Աթանասի մասին տես Թ. Մինասյան, Արցախի գրչության կենտ-

Սուլթանիայում մեզ ծանոթ հաջորդ գրիչը Գրիգոր Երեցն է²⁹։ 1329 թվականին՝ «ի թագաւորութիւն նետողական ազգին Բուսայիտ Բահատուր զանին, եւ ի թագաւորութիւն Հայոց աստուածասիրին եւ բարեպաշտին, կորովամիտ առաքինոյն Լեւոնի Զորրորդի, եւ ի հայրապետութեան տեառն Յակովբայ, եւ ի յառաջնորդութիւն աստուածապահ նահանգիս Օրտուբազրնուս Սարգիս քօրեպիսկօպօսի հայրապետական աթոռոյն» Գրիգոր Երեցը Ասլանի խնդրանքով ընդօրինակում է մի Ավետարան, որը դարձյալ ծաղկազարդում եւ կազմում է Ավագը՝ այդ մասին թողնելով հիշատակարան. «զԱւագ դպիրս, որ նկարեալ ծաղկեցի եւ կազմեցի զսուրբ Աւետարանս» (ՄՄ ձեռ. 7650, թ. 354ա)։ Գրիգոր Երեցը գեղեցկագիր է, նրա գիրը համաչափ ու գեղեցիկ բոլորգիր է, խորագրերը գրված են ոսկով եւ կարմիրով։ Ավագը նկարել է տերունական պատկերների շարքը, ավետարանիչների պատկերները եւ անվանաթերթերը, խորանները, բազմաթիվ թռչնագիր եւ հանգուցագիր զարդագրեր ու լուսանցազարդեր։ Ամբողջ էջով մեկ շրջանակի մեջ պատկերված Մարիամի ու Քրիստոսի նկարի ստորին մասում՝ հենց նրանց ոտքերի տակ, Ավագը պատկերել է նաեւ ձեռագրի պատվիրատու Ասլանին եւ իրեն՝ երկուսն էլ աղոթողի դիրքով՝ ծնկաչոք, ձեռքերը վեր պարզած դեպի Տիրամայն ու նրա Որդին, Ասլանի գլխավերելում՝ «Ասլան ստացօղ սուրբ Աւետարանիս» մակագրությամբ։ Վերջինիս Գ. Հովսեփյանը նույնացնում է Ասլան Դավրիժեցու հետ³⁰։ Իսկ նկարի տակ Ավագը հիշատակարան է թողել իր անունից. «զԱւագ դպիր նկարող սուրբ Աւետարանիս աղաչեմ յիշել ի Տէր Քրիստոս եւ ի մայր Նորա սուրբ, եւ Աստուած զձեզ յիշէ. ամէն» (ՄՄ ձեռ. 7650, թ. 25ա)։

րոնները, Երեւան, 2015, էջ 57–58, նաեւ՝ Ա. ԳԵՈՐԳԵԱՆ, Հայ մանրանկարիչներ, մատենագիտութիւն, IX–XIX դդ, Գահիրէ, 1998, էջ 28։

²⁹ Գրիչ Գրիգոր Երեցին Սիրարփի Տեր-Ներսեսյանը նույնացնում է Կարապետ գրչի պատվիրատու եւ Մխիթար Անեցի գրչի ուսուցիչ Գրիգոր քահանայի հետ։ (ՏՏՆ Լ. ՍԱՐԳՍՅԱՆ, Հին կտակարանի նկարազարդումը ԺԴ. դարի հայերեն մի Աստվածաշնչում (Ավագ մանրանկարչի արվեստը), «Բանբեր Մատենադարանի», թ. 28, էջ 296. ծնթ. 4)։ Կարծում ենք, որ դա հավանական չէ։ Գրիգոր քահանային եւ Կարապետ գրիչը, եւ Մխիթար Անեցին բնութագրում եւ մեծարում են իբրեւ «ստոյգ քարտուղար, անհաս ընթերցող» եւ ընտիր գիտնական։ Բացի այդ, երկու գրիչներն էլ Գրիգոր քահանայի ընտանիքի մասին տալիս են տեղեկություններ։ Մինչդեռ Գրիգոր Երեցը իր մասին թողել է միայն մի փոքրիկ հիշատակություն «Յիշեսջիք զփծուն եւ զանարհեստ գրիչս՝ զԳրիգոր Երէցս եւ զԾնօղսն մեր ի Քրիստոս» (թ. 353ա)։

³⁰ Գ. ՅՈՎՍԷՓԻԱՆ, Մխիթար Անեցի գրիչ եւ նկարիչ (գործածութեամբ Գլաձորի նկարիչ Աւագ դպրի), էջ 200։

Աշխատանքի մեջ Ավագին օգնել է իր աշակերտ Շնոֆոր դպիրը, որին, ինչպես նաեւ իր ծնողներին խնդրում է հիշել Ավագը. «Յիշեսջիք եւ զծնօղսն մեր եւ զբարեմիտ աշակերտս մեր՝ զՇնոֆոր (իմա՛ Շնորհաւոր, հմմտ. Աճառեան, Անձնանունների բառարան) դպիր, որ շատ աշխատեցաւ ի սմա» (ՄՄ ձեռ. 7650, թ. 354ա): Ավագը մասամբ մասնակցել է նաեւ մատյանի գրչությանը. նրա ձեռքով են գրվել Եւսեբիոսի թուղթը, համաբարբառի կանոնները, ավետարանների առաջին երկու թերթերը: Նա կազմել է նաեւ ցանկերը՝ օգտվելով Եսայի Նչեցու ընտիր օրինակից. «զսուրբ Աւետարանս ցանկագրեցի մեծ սիրով ի յընդիր օրինակէ մեծ վարդապետին Եսայեայ» (ՄՄ ձեռ. 7650, թ. 349բ): Մատյանի ստացող Ասլանը՝ աստվածասեր եւ արդարամիտ մի քրիստոնյա, Սարգիս քորեպիսկոպոսի միջնորդութեամբ այն ընծայում է Օրդուբազարի Սբ. Սարգիս եկեղեցուն: Այդ մասին գրիչը նրա անունից թողնել է հիշատակարան. «Ես՝ ամենամեղ անձն եւ տկար ոգի Ասլան, ստացօղ սուրբ Աւետարանիս, ի ձեռն Սարգիս քորեպիսկօպօսի նըւէրս ընծայեցի զսայ Օրտուբազարի մեծ եկեղեցույս Սրբոյ Սարգիս զօրավարին» (ՄՄ ձեռ. 7650, թ. 353բ): Ասլանը Ավետարանն ընդօրինակել էր տվել իր ծնողների Սամադավլի եւ Մարգարիտի, եղբոր՝ Չարուխի եւ արյունակից բոլոր հարազատների հոգու փրկության համար:

Հետագայում Ավետարանը մի քանի անգամ նորոգվել եւ կազմվել է: ԺԴ. դարում ձեռագիրը պատկանում էր պարոն Շահինշային, որն այն նվիրում է Սբ. Աստվածածին եկեղեցուն՝ հիշատակարանում խնդրելով հիշել իր բոլոր արյունակից եւ մերձավոր հարազատներին: 1503 թվականին Շահինշայի թոռ Սատաթ խաթունը Թադեոս վարդապետին վերանորոգելու է տալիս Ավետարանը, դարձյալ խնդրում հիշել պապին եւ մյուս հարազատներին: 1570 թվականին Ավետարանը կրկին նորոգվում եւ կազմվում է, այս անգամ Զաքարիա երեցի ջանքերով, իսկ 1702 թվականին մահտեսի Ավագը, տեսնելով ձեռագիր մատյանի խիստ քայքայված վիճակը, նորոգելու է տալիս այն՝ վերականգնելով մաշված թերթերը:

Սուլթանիայում գործած հաջորդ գրիչը, որի մասին տեղեկանում ենք պահպանված մի հիշատակարանից, Բարսեղ երեցն է, որ 1330 թվականին Վարդան քահանայի եւ նրա ծնողների հիշատակին ընդօրինակել է Ավետարան՝ գրչության վայրը նշելով «ի Սուլտանիայ մեծահոշակ քաղաքս».
«Յիշեցէք եւ զիս՝ զԲարսեղ երէցս, որ շնորհօք Տեառն սկսայ եւ ողորմութեամբ Նորին կատարեցի զհոգիաբողբոջ սուրբ Աւետարանս, ի Սուլ-

տանիայ մեծահոշակ քաղաքս, յիշատակ Վարդան քահանայի եւ ծնողաց իւրոց, եւ ինձ եւ իմոցն, ի թուականութեանս Հայոց 92թ. (1330)»³¹:

Սուլթանիայի հայ մշակութային միջավայրի ներկայացուցիչն է գրիչ, ծաղկող եւ կազմող Մխիթար Անեցին³², որը, ինչպես ինքն է նշում իր գրչագրած ձեռագրերից մեկի հիշատակարանում, Անիից Սուլթանիա էր տեղափոխվել տեր Սարգսի եւ Գրիգոր քահանայի առաջարկով: Մխիթարը եւս քահանայական ընտանիքից էր. քահանաներ էին նաեւ նրա հայրը եւ երկու եղբայրները:

1334 թվականին Մխիթարը գրում, ծաղկում եւ կազմում է մի Ավետարան (Երուսաղէմ, ձեռ. 1941)³³: Նա մատյանի ընդօրինակումը ձեռնարկել է Ավագ դպրի ու Գրիգոր քահանանյի հորդորով եւ իր խոստովանահայր Տիրապետ քահանայի հրամանով. «Յոյժ սիրով եւ յօժար կամօք յորդորեցին զմեզ զքաջ քարտուղարն եւ անհամեմատ նկարողն՝ Ավագ վարդապետն եւ բազմերախտ հոգեւոր հայրն մեր, ստոյգ քարտուղարն եւ անհաս ընթերցողն՝ Գրիգոր երէց Անեցի, եւ նստել ծրեցի յարքայանիստ քաղաքն Սուլթանիա, հրամանաւ խոստովանահօրն իմոյ՝ Տիրապետ քահանայի եւ վարդապետի»³⁴: Հիշատակարանում Մխիթարն Ավագին անվանում է «քաջ քարտուղար եւ անհամեմատ նկարող», իսկ Գրիգոր Անեցուն՝ «ստոյգ քարտուղար» եւ «անհաս ընթերցող, ուսուցիչ եւ խրատող»³⁵:

Մխիթարը թողել է հիշատակարաններ մատյանի տարբեր էջերում: Իրեն մեղապարտ աշխարհական համարող գրիչը մատյանն ընդօրինակել է նորաշեն եւ արքայանիստ Սուլթանիա քաղաքում եւ իր, ծնողների, հարազատների ու երախտավոր ուսուցիչների հոգու փրկության համար նվիրել «արեգակնափայլ եւ երկնահանդէս գերահոշակ Սուրբ ուխտին ///*»* (Երուսաղէմ, ձեռ. 1941, թ. 15ա): Այստեղ մեկ բառ քերված է եւ բացակայում է սրբավայրի անունը: Նույն ձեռագրի մեկ այլ

³¹ «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԴ. դար, մասն Բ. (1323–1350), էջ 77:

³² Կ. Մաթեոսյանն անդրադարձել է Մխիթար Անեցու ձեռագրական ժառանգությանը որպէս Անիի գրչության կենտրոնի ներկայացուցիչ: Տես Կ ՄԱԹԵՈՍՅԱՆ, Անի. եկեղեցական կյանքը եւ ձեռագրական ժառանգությունը, Ս. էջմիածին, 1997, էջ 307–309:

³³ Ն. ՊՈՂԱՐԵԱՆ, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հտ. 6, Երուսաղէմ, 1972, էջ 481–486: «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», ԺԴ. դար, մասն Բ. (1326–1350), կազմողներ՝ Լ. ԽԱՋԻԿՅԱՆ, Ա. ՄԱԹԵՈՍՅԱՆ, Ա. ՂԱԶԱՐՈՍՅԱՆ, Երեւան, 2020, էջ 200–201:

³⁴ Ն. ՊՈՂԱՐԵԱՆ, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հտ. 6, Երուսաղէմ, 1972, էջ 484:

³⁵ Նույն տեղում, էջ 483–484:

հիշատակարանում Մխիթարը դարձյալ գրում է, որ մատյանը ընծայել է «քրիստոսակիր եւ հրաշագործ արեամբ ներկեալ Խաչին եւ աստուածահրաշ Սուրբ Նշանին ///» (Երուսաղեմ, ձեռ. 1941, թ. 156ա): Տեղանունն այստեղ նույնպէս ջնջված է, բայց գրեթէ կասկած չի մնում, որ խոսքը Վարագա Սուրբ Նշանի մասին է, որովհետեւ, ինչպէս կտեսնենք 1424 թվականի հետագայի հիշատակարանից, Ավետարանը կոչվում է Վարագա Ավետարան:

Մխիթարը հիշատակում է Սուլթանիայի առաջնորդ Սարգիս քորեպիսկոպոսին ու նրա եղբայր Գրիգոր եպիսկոպոսին, պատվելի ծերունի Խաչատուր քահանա Սեբաստացուն եւ նրա անդրանիկ որդուն՝ Ներսես սարկավագին, Ստեփանոս երեց Բաբերդցուն եւ նրա որդի Շնոֆոր սարկավագին, որոնք սիրով օժանդակել են Մխիթարին ձեռագիրն ավարտին հասցնելու: Մխիթար Անեցին հիշում է նաեւ իր ծնողներին՝ Հակոբ քահանային եւ Սեդա խաթունին, հարազատ եղբայրներ Գեւորգ եւ Գրիգոր քահանաներին, քույր Զալալին, իր առաջին ուսուցչին՝ Ճան Հակոբին: Իսկ վերջում գրիչը խնդրում է հիշել իրեն. «զսեւացեալս մեղաւք՝ զՄխիթար եղկելի, որ անարժան ձեռաւք գրեցի եւ անվարժ ծաղկեցի եւ անարհեստ կազմեցի եւ ետու զուգել զսա» (Երուսաղեմ, ձեռ. 1941, թ. 308ա):

Ավագը նկարագրադել է տերունական պատկերները եւ ավետարանիչների դիմանկարները, իսկ Մխիթարը՝ խորանները, անվանաթերթերը եւ լուսանցազարդերը: Դրա համար էլ Մխիթարն իրեն անվանում է ծաղկող, իսկ Ավագին՝ նկարող: Խաչելության մանրանկարի ստորին մասում Ավագը պատկերել է նաեւ Մխիթարի դիմանկարը հետեւյալ գրութեամբ. «Անարժան ծառայն իւր Մխիթար ի ծունկս անգեալ խնդրել զթողութիւն իւր բազում յանցանացն եւ ամենայն մեղաւորաց բարեխօսութեամբ Սբ. Կուսին Մարիամու Աստուածածնին» (Երուսաղեմ, ձեռ. 1941, թ. 6բ):

Պատմական հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում 1424 թվականի հիշատակարանը: Հետագայի գրիչը վկայում է Կարա Յուսուֆի որդի Իսքանդարի արշավանքի մասին դեպի Ռշտունյաց գավառ: Հստ հիշատակարանի՝ Իսքանդարը հսկա հեծելազորով պաշարում է Վանաբերդը, ավերում է շրջակա տարածքները, սպանում եւ գերեվարում բնակիչներին, այրում է եկեղեցիները եւ թալանում ձեռագիր մատյանները: Գրիչը գրում է. «Եւ յայսմ ամի, որ թուականն Հայոց էր ՊՀԳ. (1424) ... եկն Աքանդարն յերկիրն Հռշտունեաց բազում հեծելօք եւ զՎանայ բերդն խսարեաց եւ շատ աւեր էած, զոր սպանմամբ, եւ զոր գերութեամբ, եւ զոր

այրելով, եւ զեկեղեցիքն կործանեցին, եւ զգրեանքն գերի վարեցին եւ բերին ի քաղաքն Սղերդ» (Երուսաղեմ, ձեռ. 1941, թ. 108բ-109ա):

Այս ավերածությունների ընթացքում գերեվարվում է նաեւ մի Ավետարան, որը գրիչը անվանում է Վարագա Ավետարան: Այն տեղափոխվում է Սղերդ քաղաք, որտեղ տեղի է ունենում մի հուզիչ փրկության պատմություն: Տանուտեր խոջա Գորգը իր կին Ղրիմխաթունի եւ փեսա խոջա Բաղչայիչի հետ վճարում են 1500 դրամ՝ գնելով եւ գերությունից ազատելով սուրբ Ավետարանը: Նրանք այն կրկին հանձնում են Վարագա վանքին՝ ի հիշատակ իրենց ընտանիքի եւ բարեկամների հոգու փրկության: Հիշատակարանում արձանագրվում է այս փաստը. «Հաւատարիմ եւ աստուածասէր տանուտէրն՝ խոջա Գորգ, եւ փեսայն՝ խոջա Բաղչայիչ, եւ կենակիցն՝ Ղրիմխաթուն, եւ ազատեցին ի գերութենէ զսուրբ Աւետարանս... Եւ ետուն ի գին նորա Ռեճ. (1500) դրամ մերտնցի, եւ ետուն կրկին ի Սուրբ Ուխտն»³⁶:

1338 թվականին Մխիթարը Սուլթանիայում ընտիր բոլորգրով ընդօրինակում է երկրորդ մատյանը, այս անգամ Աստվածաշունչ (ՄՄ ձեռ. 4429): Մատյանի ծաղկազարդումը վերապահված էր Ավագին, սակայն վերջինս հասցնում է միայն Եսայի (22բ) եւ Եզեկիել (93բ) մարգարեների տեսիլքների ուրվանկարները՝ առանց գունավորման, ավետարանիչներին եւ Մարկոսի, Ղուկասի եւ Հովհաննեսի անվանաթերթերը: Ավագի աշխատանքը մնում է թերի՝ չնայած Մխիթարի ակնկալիքին՝ տեսնել մատյանը «Ոսկով զուգած այս խորաննիս/ Եւ զանազան այս ծաղկնիս/ Չքնաղագեղ այս սուրաթնիս» (ՄՄ ձեռ. 4429, թ. 148բ):

Մատյանի բազմաթիվ էջերում Մխիթարը թողել է հիշատակարաններ՝ խոսելով իր տկարության, սխալների եւ հոգեւոր վիճակի մասին, դրա համար անմեղադրություն է խնդրում. «Անմեղադիր լերուք խոշորութեան գրոյս եւ սխալանաց սորա, զի էի տկար մարմնովս եւ մեռեալ հոգովս. աղաչեմ անտրտունջ զորդել եւ զմեզ անբամբասանս արձակել. յօժարութիւնս հայեաց եւ մի՛ յարհեստն» (ՄՄ ձեռ. 4429, թ. 319բ): Ընդարձակ չափածո հիշատակարանում Մխիթարը կարոտով է հիշում հայրենի քաղաք Անին՝ «Յիշեմ զգաւառն իմ հայրենին,/ Զմայրաքաղաք ամուրն Անին», հիշում է ծնողներին՝ Հակոբին եւ Սեդային, եղբայրներին՝ Գեւորգին եւ Գրիգորին, քրոջը՝ Զալալին, որոնք արդեն հանգուցյալ են, տեր

³⁶ Ն. ՊՈՂԱՐԵԱՆ. Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հտ. 6, էջ 485–486:

Սարգսին եւ տեր Գրիգորին, արի եւ քաջ քարտուղար եւ անհամեմատ նկարող Ավագ սարկավագին, իր ուսուցիչ եւ ընտիր գիտնական Գրիգոր քահանային, նրա որդի Պարոնին, որ իր դասընկերն է եղել, Սուլթանիայի եկեղեցու քահանաներին, որոնց անուններն ու կատարած գործերը թվարկում է մեկ առ մեկ. Ստեփանոս Բաբերդցուն, քաղցրաբարբառ Բարսեղ կրոնավորին, Հովհաննես փակակալին, Հայրապետ քահանային, Ներսեսին, Աստուածատուր ոսկերչին, Շնաֆոր սարկավագին, Պետրոսին, Մժղնին, Սարգսին եւ շատերին: Մխիթարը հիշում է նաեւ իր չորս աշակերտներին՝ Արասբուղին, Թաթոսին, Սայինբեկին, Գրիգորին:

1356–1357 թվականներին, արդեն ծեր եւ տկար, Մոմեղեն սարկավագի պատվերով Մխիթարը ընդօրինակում է իր վերջին մատյանը՝ Ավետարան (ՄՄ ձեռ. 7740): Չնայած ձեռագրի հիշատակարանում բացակայում է գրչության տեղը, բայց նշվում են մատյանն սկսելու եւ ավարտելու թվականները. «Գրեցաւ ի ԸԺ. հարիւրերորդի հինգերորդի (1356) ... եղեւ աւարտումս սորա թվիս ՊԶ. (1357)»: Անիից արտագաղթելուց հետո Մխիթարը հաստատվել էր Սուլթանիայում, որտեղից այլեւս չէր տեղափոխվել մեկ ուրիշ բնակության վայր: Կարող ենք հետեւություն անել, որ Մխիթարից մեզ հասած վերջին մատյանը նա ընդօրինակել է Սուլթանիայում, երբ արդեն առաջացած տարիքում էր. «Ես՝ ամենաթշուառ ալեւորակս, մեռեալս մեղօք Մխիթար Անեցի՝ գծով անարժան ձեռամբ սուրբ Աւետարանիս եւ անարհեստ կազմող սորին»: Ձեռագրում ծաղկողի մասին որեւէ հիշատակություն չկա, սակայն, ինչպես նկատում է Գ. Հովսեփյանը, Մխիթարը նկարել է Ավագ նկարչի տերունական պատկերների հետեւությամբ³⁷: Աստղիկ Գեւորգյանը, ելնելով ոճային նկարազարդումներից, նույնպես ծաղկազարդումը վերագրում է Մխիթար Անեցուն³⁸: Մխիթարը նկարել է տերունական պատկերների շարքը, իսկ 4ա թերթի ներքեւում՝ Աստվածամայրը մանկան հետ նկարի ստորին մասում, Մխիթարը պատկերել է ձեռագրի պատվիրատու Մոմեղեն սարկավագին եւ նրա որդուն: Մխիթարը նկարել է նաեւ Մարկոս, Ղուկաս եւ Հովհաննես ավետարանիչների դիմանկարներն ու չորս անվանաթերթերը, խորանները, կիսախորանները, բուսական լուսանցազարդերը եւ թռչնագիր ու հանգուցա-

³⁷ Գ. ՅՈՎՍԷՓԵԱՆ, Մխիթար Անեցի գրիչ եւ նկարիչ (գործածութեամբ Գլաձորի նկարիչ Աւագ դպրի), էջ 211:

³⁸ Ա. ԳԵՈՐԳԵԱՆ, Հայ մանրանկարիչներ, մատենագիտութիւն IX–XIX դդ., Գահիրէ, 1998, էջ 429:

գիր զարդագրերը՝ օգտագործելով բազմազան երանգներ եւ ոսկի: Գրիչը մի քանի տեղերում կարմիր թանաքով սրբագրումներ է կատարել, իսկ ավետարանական յուրաքանչյուր գլխից հետո կարմիրով եւ կապույտով ցուցումներ է տալիս՝ «Վասնեղիտ ցանկս կապուտագիր է ի ճապաղն», «Տէրունական հրամանքն աստղանշան կարմիր է ի ճապաղն, Ֆռանգաց փոխեն լքով նշագրուած իւրաքանչիւր գլխոյ», «Տէրունական հրամանքն խաչանիշ կարմիր է, եւ կետածն առաջք է: Վասնեղիտս համարագիրն կապուտագիր է Ֆռանգաց փոխէ»: Մոմեղեն սարկավագը, որին Մխիթարը այսպես է հիշում «արդարամիտ եւ բարեպաշտ առն, լցեալն ամենայն իմաստութեամբ եւ զարդարեալն զանազան առաքինութեամբ», Ավետարանը խնդրել եւ ստացել է իրենց ողջ գերդաստանի հիշատակի համար: Նրա անունից Մխիթարը թողել է ընդարձակ հիշատակարան, որտեղ հիշվում են արյունակից եւ խնամիական կապերով կապված բոլոր կենդանի ու հանգուցյալ բարեկամները, հիշվում են նաեւ Զաքարի քահանան եւ կնքավոր Զաքի-չարուխը: Հետաքրքիր է, որ Մոմեղեն սարկավագը չի մոռանում իր արհեստավոր բարեկամներին՝ նշելով նաեւ նրանց աշխատանքի բնագավառը, ինչպես՝ ուստա Ավրանը, դասաբ Նվարադը, գինեծախ Զաքարեն: Հիշատակարանի այս հատվածում Մխիթարը կրկին խնդրում է հիշել իրեն, որ «ծեր ալեալք եւ տկար անձամբ գրեցի», ապա խնդրում է անմեղադիր լինել «սղալանաց եւ խոշորութեան գրիս, վասն զի կարի յոյժ իմն ծեր անձամբ աշխատեցայ ի գրելն սորայ»: Նա հիշատակում է նաեւ մանկտավագ Ներսեսին՝ որպես իր օգնական եւ աշակերտ: Ներսեսը հիշվում է նաեւ 1334 եւ 1338 թվականների ձեռագրերում՝ որպես խաչատուր Սեբաստացի քահանայի որդի, ընդ որում՝ գրիչը երկու դեպքում էլ հիշում է նրան Շնոֆոր սարկավագի հետ. «զպատուեալ ծերունին՝ զխաչատուր քահանայ Սեւաստցի եւ զանդրանիկ նորին զսիրելի եղբայրն մեր՝ զՆերսէս սարկաւագ եւ զՍտեփաննոս երէց Բաբերթցի, եւ զորդին՝ զՇնաւոր սարկաւագն, որք բազում սիրով յորդորեցին զմեզ ի գործս եւ օժըդակ եղեն տկարիս» (Երուսաղեմ, ձեռ. 1941, թ. 156ա):

Ըստ հետագայի հիշատակարանների՝ ձեռագիրը մի քանի անգամ նորոգվել ու կազմվել է: Աներոջ՝ Ամիրշահ աղայի՝ Սուրբ Սարգիս եկեղեցուն ընծայած Ավետարանը 1488 թվականին Հովհաննեսը զարդարել է տվել արծաթյա տասներեք կոստղերով (թ. 1ա): Հետագայում է ավելացվել նաեւ կազմի արծաթյա խաչը, որի մասին ոմն Թուրվանդա իր եւ երկու որդիների անունից 1546 թվականին թողել է հիշատակարան (թ. 1ա):

Սուլթանիայի հայկական գրչության կենտրոնի մասին վերջին տվյալները հաղորդում է հենց Մխիթար Անեցին՝ որպես վերջին գրիչը:

Այս գրչության կենտրոնը, որը ձևավորվեց Անիից այստեղ արտագաղթած անեցիների շնորհիվ, գործեց երեք տասնամյակ եւ կապված էր Հայաստանի մյուս կենտրոնների հետ, ամենից առաջ Գլաձորի հետ: Այդ է պատճառը, որ Գլաձորի դպրոցն ավարտած եւ Եսայի Նչեցու սան Ավագ Ծաղկողը շատ երկար ժամանակ համագործակցում էր Սուլթանիայի գրիչների հետ, իսկ գրիչները ձեռագիր մատյաններ էին օրինակում Իլխանությունում մեծ հեղինակություն վայելող Սյունյաց իշխանների համար: Սուլթանիայում հայտնի էին գրիչներ եւ ծաղկողներ Մխիթար Անեցին եւ Ավագը, գրիչներ Կարապետը, Բարսեղը եւ Գրիգորը: Նրանցից մեզ են հասել ութ գեղեցկագիր եւ նկարազարդ ձեռագրեր:

1385 թվականին Հուլավյանների պետության փլուզման հետեւանքով Սուլթանիան կորցրեց իր երբեմնի քաղաքական եւ տնտեսական նշանակությունը: Քաղաքը դադարեց լինել Իլխանության մայրաքաղաք, իսկ Լենկ Թեմուրի ավերիչ արշավանքների արդյունքում նրա բնակչությունը տարագրվեց՝ հիմնականում տեղափոխվելով Թավրիզ եւ այլ անվտանգ վայրեր³⁹: Այս գործընթացը հանգեցրեց ոչ միայն վարչական կարգավիճակի կորստին, այլեւ քաղաքային կյանքի աստիճանական անկմանը: Սուլթանիան, որը մի ժամանակ հանդիսանում էր արքունական, հոգեւոր եւ մշակութային կենտրոն, աստիճանաբար դատարկվեց՝ վերածվելով փոքրիկ գյուղակի: Նրա մայրաքաղաքային նշանակության անկումը պայմանավորված էր միաժամանակ քաղաքական անկայունությամբ, ռազմական վտանգներով եւ տնտեսական քայքայմամբ: Այս անբարենպաստ պայմաններում ավարտվեց նաեւ Սուլթանիայի գրչության կենտրոնի՝ շուրջ երեսունամյա բեղուն գործունեությունը՝ թողնելով, սակայն, զգալի հետք հայ մշակույթի, գրչության եւ ձեռագրագիտության պատմության մեջ:

³⁹ Հ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Իրանահայ գաղութի պատմություն, Երեւան, 2007, էջ 189:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Սուլթանիա, Գրիգոր Անեցի, Մխիթար Անեցի, Կարապետ գրիչ, Ավագ ծաղկող, Հովաթյաններ, գրչության կենտրոն, ձեռագիր մատյան, Սարգիս քրեպիսկոպոս, Բորթել Օրբելյան

РЕЗЮМЕ

Среди скрипториев армянских поселений в Иране особое место занимает скрипторий Султании, первое упоминание о котором относится к 1326 году. Этот скрипторий был основан переселенцами из Ани, которые принесли с собой лучшие традиции Анийской школы. Благодаря им в Султании утвердились высокие стандарты армянской рукописной культуры.

На протяжении почти тридцати лет скрипторий Султании поддерживал тесные связи с другими армянскими скрипториями, прежде всего с Гладзором. Выпускник Гладзорской школы и ученик Есаи Нчеци — Авак — на протяжении долгого времени тесно сотрудничал с писцами Султании. Сами писцы создавали рукописные книги для князей Сюника, пользовавшихся высоким авторитетом в государстве Ильханов.

В Султании были известны писцы и миниатюристы Мхитар Анеци и Авак, а также писцы Карапет, Барсег и Григор. От их деятельности дошли до нас восемь прекрасно оформленных и иллюстрированных рукописей, являющихся ценными памятниками армянской книжной традиции.

В 1385 году, после распада государства Хулагуидов, Султания утратила своё прежнее политическое и экономическое значение. В этих неблагоприятных условиях завершилась и почти тридцатилетняя активная деятельность скриптория Султании, оставив, однако, значительный след в истории армянской рукописной культуры.

SUMMARY

Among the scriptoria of Armenian settlements in Iran, the scriptorium of Sultaniya occupies a special place, with the earliest mention of it dating back to

1326. This scriptorium was founded by emigrants from Ani, who brought with them the best traditions of the Ani school. Thanks to them, high standards of Armenian manuscript culture were established in Sultaniya.

For nearly three decades, the Sultaniya scriptorium maintained close ties with other Armenian centers of manuscript production, most notably with Gladzor. Avag, a graduate of the Gladzor school and a disciple of Yesayi Nchetsi, collaborated closely and over a long period with the scribes of Sultaniya. These scribes produced handwritten volumes for the princes of Syunik, who enjoyed great prestige within the Ilkhanate.

Renowned scribes and illuminators of Sultaniya included Mkhitar Anetsi and Avag, as well as scribes Karapet, Barsegh, and Grigor. Eight beautifully written and richly illustrated manuscripts made by them have survived, bearing witness to the high artistic standards of the time.

In 1385, following the collapse of the Hulagu dynasty, Sultaniya lost its former political and economic significance. Under these unfavorable conditions, the nearly thirty-year flourishing activity of the Sultaniya scriptorium came to an end, but it left an indelible mark on the history of the Armenian manuscript tradition.

